# Թագվորագովք

Ծառ խնկենին որ ծաղկեցավ,
Թուփն ու տերն բոլորեցավ,
Թագվոր աթոռք ուրախացավ,
Խերն ու բարին մըր թագվորին,
Խերն ու բարին մըր թագվորին:

Ծառ բալենին որ ծաղկեցավ,
Սուրբ խաչ վըրեն որ բազմեցավ,
Թագվոր աթոռք ուրախացավ,
Խերն ու բարին մըր թագվորին,
Խերն ու բարին մըր թագվորին:

Գացեք բերեք ըզկաքավ քարեն,
Թող գա մտնի դարբասխաննեն,
Ջընդրիկ զարկենք սուրբ սեղանին,
Խերն ու բարին մըր թագվորին,
Խերն ու բարին մըր թագվորին:

Գացեք բերեք ըզկռունկ չոլեն,
Թող գա մտնի դարբասխաննեն,
Ջընդրիկ զարկենք սուրբ սեղանին,
Օրշնենք ըզթագվոր զուր թագուհին,
Օրշնենք ըզթագվոր զուր թագուհին,
Խերն ու բարին մըր թագվորին,
Օրշնենք ըզթագվոր զուր թագուհին: